ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2022 թվականի N 2106 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի կողմից ներկայացված՝ Ծակքար բնակավայրում եկեղեցի կառուցելու ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված, պետական սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, համայնք Ծակքար, 1-ին փողոց 16/2 հասցեում գտնվող՝ 0.1466 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 09112021-05-0041) նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքին (այսուհետ՝ համայնք)՝ Ծակքար բնակավայրում եկեղեցի կառուցելու նպատակով:

3. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ համայնքը պարտավորվում է գույքի հանձնման-ընդունման ակտն ստորագրելու օրվանից սկսած եկեղեցի կառուցելու նպատակով երեք տարվա ընթացքում իրականացնել 107 000 000 դրամի ներդրում, որից 12 000 000 դրամը՝ 1-ին տարում, 50 000 000 դրամը՝ 2-րդ տարում, 45 000 000 դրամը՝ 3-րդ տարում.

2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետից բխող նվիրաբերության պայմանագրի հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման համայնքի միջոցների հաշվին.

3) նվիրաբերության պայմանի խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության պահանջով նվիրաբերությունը կհամարվի վերացված, և նվիրաբերություն ստացողը պարտավոր է Հայաստանի Հանրապետությանը վերադարձնել նվիրաբերված գույքը՝ դրա վրա կատարված անբաժանելի և բաժանելի բարելավումների հետ միասին առանց դրանց արժեքի փոխհատուցման:

4. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրի կնքումից հետո երկամսյա ժամկետում ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

5. Առաջարկել համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 4-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո, մինչև եկեղեցու կառուցման աշխատանքների մեկնարկը, գույքի նպատակային նշանակությունը փոխել ըստ էության.

2) սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում համայնքի կողմից կատարված ներդրումների արդյունքում կառուցված եկեղեցին նվիրաբերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ